«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(2012 - 2017)

Խմբագրական խորհուրդ՝ **Ս.Ա. Առաքելյան** (նախագահ), **Ա. Հ. Մակարյան, Մ. Ա. Ճաղարյան, Հ.Ս.Վանյան**

ԵՊՀ ԻՄ-ի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներ.

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տպարան, Իջևան, 2017, 74 էջ:

Սույն վերլուծական ուսումնասիրության նպատակը «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (ԵՊՀ ԻՄ, Մասնաճյուղ) գործունեության արդյունավետության և կատարողականի գնահատումն է՝ գործունեության առանցքային ցուցանիշների /ԳԱՑ/ սահմանված լրակազմի օգնությամբ: Ներկայացված են ԵՊՀ ԻՄ-ի գործունեության հիմնական ոլորտների առանցքային ցուցանիշները վերջին հինգ (երբեմն ավելի քիչ) տարիների համար: Այն վեր է հանում ԵՊՀ ԻՄ-ի ձեռքբերումները և թույլ կողմերը՝ նրա հետագա զարգացումն առավել արդյունավետ կազմակերպելու համար: Սույն վերլուծությունը նաև կնպաստի ԵՊՀ ԻՄ-ի որակի ինքնագնահատման կարողությունների հզորացմանը:

Հասցեագրվում է բոլոր այն կառույցներին, որոնց գործունեությունն առնչվում է ԵՊՀ ԻՄ-ի կառավարման և պլանավորման գործընթացներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 5

Բնագավառ 1. Ընդունելություն և համակազմ 7

Բնագավառ 2. Ուսումնական գործընթաց 22

Բնագավառ 3. Ռեսուրսներ և կառավարում 38

Բնագավառ 4. Ենթակառուցվածքներ 54

Բնագավառ 5. Գիտություն և նորամուծություն 65

Բնագավառ 6. Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն 72

Նախաբան

Սույն վերլուծությունը կատարվել է ԵՊՀ ԻՄ-ի 2016-2020 թվականների զարգացման ռազմավարական ծրագրերի մշակման գործընթացի շրջանակներում 2016/17 ուստարում՝ ԵՊՀ ԻՄ-ի համապատասխան կառույցների մասնակցությամբ:

Ուսումնասիրության՝ ստորև ներկայացվող արդյունքներն ունեն երկակի նշանակություն: Առաջին հերթին այս ցուցանիշները կարող են հիմք ծառայել բուհի ինքնավերլուծության ու գործունեության արդյունավետության գնահատման, ինչպես նաև եռամյա և տարեկան հաշվետվությունների ստեղծման համար, մյուս կողմից դրանք կարող են օգտագործվել Համալսարանի ռազմավարական պլանավորման գործընթացում՝ ներքին միջավայրի վերլուծության և հաջորդ SWOT-ի /ուժեղ և թույլ կողմերի, արտաքին հնարավորությունների և վտանգների/ որոշման համար:

ԵՊՀ ԻՄ-ի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների /ԳԱՑ/ առաջարկվող լրակազմն անհրաժեշտ է ռազմավարական պլանավորման գործընթացի տարբեր փուլերի և քայլերի արդյունքները չափելու և վերլուծելու համար: Որպես չափիչ գործիք՝ ԳԱՑ-երը կոնկրետ են, պարզ և հաշվարկելի: Դրանց առկայությունը պլանավորման գործընթացում ապահովում է վերջինիս նպատակների, խնդիրների և ռազմավարության գործնականությունը:

Միջավայրով ուղղորդվող ռազմավարական պլանավորումը ենթադրում է բուհի գործունեության (կամ կատարողականի) գնահատում և համեմատում՝ բուհի կամ նրա շահակիցների կողմից սահմանված «ցանկալի» ցուցանիշների հետ՝ ապահովելով կապը բուհի և միջավայրի կարևորագույն տարրերի միջև: ԳԱՑ-երն այն անհրաժեշտ հենքն են, որոնք կապակցում են բուհի կարևորագույն գործառույթները պլանավորման գործընթացի հետ: Այս ցուցանիշների օգտագործումը ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարական պլանավորման գործընթացում մեզ հնարավորություն է տվել հիմնական ռազմավարական ոլորտներում համեմատել ԵՊՀ ԻՄ-ի գործունեության արդյունքները կամ կատարողականը այլ բուհերի, ԵՊՀ ԻՄ-ի նախորդ տարիների և պլանավորված ցուցանիշների հետ:

Առաջարկվող ցանկում կա ցուցանիշների երկու տեսակ, որոնք ձևավորում են ԳԱՑ-երի լրակազմը: Առաջինը գործ ունի մասնաճյուղի հիմնական գործունեության որոշակի արդյունքի չափման հետ, արդյունք, որի նկատմամբ ԵՊՀ ԻՄ-ն ունի վերահսկողության հնարավորություն: Ցուցանիշների այս խումբը կոչվում է գործունեության արդյունքի գնահատման առանցքային ցուցանիշներ: ԳԱՑ–երի երկրորդ խումբը կապված է այն պայմանների չափման հետ, որոնք անմիջականորեն ազդում են բուհի «առողջական» վիճակի և բարեկեցության վրա, պայմաններ, որոնց նկատմամբ բուհը կարող է ունենալ փոքր վերահսկողություն կամ ընդհանրապես չունենալ:

Համաձայն ընդունված մեթոդաբանության՝ ուսումնասիրությունը կատարելիս իրականացվել են հետևյալ հաջորդական քայլերը:

Առաջին քայլը, որ կատարվել է ԵՊՀ ԻՄ-ի ԳԱՑ-երի համապարփակ ցանկի կազմման ուղղությամբ, Համալսարանի գործունեության հիմնական ոլորտների պարզումն է, որտեղից էլ ընտրվել են ամենակարևոր ԳԱՑ-երը: Առանձնացվել են ԵՊՀ ԻՄ-ի գործունեության 6 հիմնական ոլորտներ.

1. Ընդունելություն և համակազմ
2. Ուսումնական գործընթաց
3. Ռեսուրսներ և կառավարում

4. Ենթակառուցվածքներ
5. Գիտություն և նորամուծություն
6. Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն:

Այնուհետև սահմանվել են ԵՊՀ ԻՄ-ի գործունեության գնահատման առանցքային և «առողջական» վիճակի ցուցանիշները: Կատարվել է ԳԱՑ-երի ուսումնասիրություն և վերլուծություն ըստ տարիների՝ 2012-2017 թթ. ժամանակահատվածի համար: Ստորև բերված է ԵՊՀ ԻՄ-ի ԳԱՑ-երի համապարփակ ցանկը՝ բաղկացած 64 ցուցանիշներից և դասակարգված ըստ ԵՊՀ ԻՄ-ի գործունեության հիմնական ոլորտների:

Առաջարկվող վերլուծական ուսումնասիրությունը հասցեագրվում է ԵՊՀ ԻՄ-ի և նրա ստորաբաժանումների վարչակազմերին, բոլոր այն կառույցներին, որոնց գործունեությունն առնչվում է ԵՊՀ ԻՄ-ի կառավարման և պլանավորման գործընթացներին:

ԲՆԱԳԱՎԱՌ 1.

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԱԶՄ

Յուցանիշ 1.1.	Դիմորդների թիվը (ըստ կրթական աստիճանների, ուսուցման ձևերի և ուղղությունների)
Յուցանիշ 1.2.	Դիմորդների բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում
Յուցանիշ 1.3.	Դիմորդների բաշխումն ըստ մարզերի
Յուցանիշ 1.4.	Ընդունելությունն ըստ կրթական աստիճանների (անվճար, վճարովի)
Յուցանիշ 1.5.	ԵՊՀ ԻՄ-ի ընդունելության բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում
Յուցանիշ 1.6.	Մրցութային ցուցանիշն ըստ կրթական աստիճանների (դիմորդների և ընդունվածների հարաբերությունը)
Յուցանիշ 1.7.	Իգական սեռի հաշվեկշիռը դիմորդների և ընդունվածների ընդհանուր հոսքում
Յուցանիշ 1.8.	Օտարերկրյա դիմորդների թիվը և հարաբերությունը ընդունվածների թվին
Յուցանիշ 1.9.	Հեռակա ուսուցման դիմորդների թիվը և հարաբերությունն ընդունվածների թվին
Յուցանիշ 1.10.	Հիմնական ուսանողական համակազմը (ըստ կրթական աստիճանների)
Յուցանիշ 1.11.	Օտարերկրյա ուսանողների համակազմը և հաշվեկշիռը հիմնական համակազմում
Յուցանիշ 1.12.	Հեռակա ուսուցման համակազմը (բակալավրիատ) և հաշվեկշիռը հիմնական համակազմում
Յուցանիշ 1.13.	Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռն ընդունելության ծավալում (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)
Յուցանիշ 1.14.	Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռը հիմնական համակազմում (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)

Ցուցանիշ 1.1. Դիմորդների թիվը (ըստ կրթական աստիճանների, ուսուցման ձևերի և ուղղությունների)

Ցուցանիշ 1.1	2012	2013	2014	2015	2016
Դիմորդների թիվն ըստ կրթական աստիճանների և ուղղությունների	**630**	**499**	**439**	**405**	**434**
Բակալավրիատ (առկա)	**347**	**288**	**222**	**208**	**228**
Հումանիտար գիտություններ	167	144	109	93	112
Բնական գիտություններ	45	43	31	49	60
Տնտեսագիտական	108	81	60	45	41
Կիրառական արվեստ	27	20	22	21	15
Բակալավրիատ (հեռակա)	**272**	**202**	**217**	**197**	**206**
Մագիստրատուրա	11	9	0	0	0
Կիրառական արվեստ	11	9	0	0	0

Դիմորդների ընդհանուր թիվը վերջին հինգ տարիների ընդունելության արդյունքներով մինչև 2015թ. աստիճանաբար նվազել է բոլոր ուղղությունների գծով (բացառություն է կազմում բնագիտական ուղղությունը): 2016թ. արդյունքներով առկա և հեռակա ուսուցմամբ դիմորդների թիվն աճել է նախորդ տարվա համեմատությամբ: Դա արդյունք է ինչպես ընդունելության ամենամյա պլանավորման՝ ուղենիշ ունենալով արտաքին և ներքին միջավայրերի վերլուծությունները, այնպես էլ տարածաշրջանի և հարակից մարզերի ավագ դպրոցներում մասնաճյուղի կրթական ծրագրերի վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու ուղղությամբ տարվող աշխատանքների, հանդիպումների և ճանաչողական այցերի: Նվազման միտումը պահպանվել է տնտեսագիտության ուղղությամբ, ինչի պատճառներից կարելի է համարել ինչպես միասնական քննությունների թվաքանակը (3 միասնական քննություն), այնպես էլ դրանց հաղթահարման դժվարությունները և կիրառական արվեստի ուղղությունը, որի համար որպես պատճառներ կարելի է նշել տարածաշրջանի աշխատաշուկայում համապատասխան աշխատատեղերի բացակայությունը, նաև մանկավարժի որակավորում չստանալը:

2012թ.-ից հաշվառված են նաև մագիստրատուրայի դիմորդները: *2014թ.-ից ժամանակավորապես դադարեցվել է մագիստրատուրայի ընդունելությունը:*





Յուցանիշ 1.2. Դիմորդների բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում

Յուցանիշ 1.2	2012	2013	2014	2015	2016
Ընդհանուր դիմորդների թիվը	16155	13439	12300	11803	11324
ԵՊՀ ԻՄ դիմորդների թիվը(առկա)	347	288	222	208	228
ԵՊՀ ԻՄ դիմորդների բաժնեմասը	2,15%	2,14%	1,80%	1,76%	2.01%

ԵՊՀ ԻՄ-ի դիմորդների բաժնեմասն ընդհանուր դիմորդների համակազմում համեմատաբար կայուն է և կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր թվում կազմում է մոտ 2%: Ընդհանուր դիմորդների համակազմում ԵՊՀ ԻՄ-ի դիմորդների նվազումը պայմանավորված է ինչպես կրթօջախում հեռակա ուսուցման առկայությամբ, այնպես էլ մարզում շրջանավարտների թվի նվազմամբ: 2016 թվականին նորից նկատվել է դիմորդների թվի աճ:





Ցուցանիշ 1.3. Դիմորդների բաշխումն ըստ մարզերի

Ցուցանիշ 1.3	2012		2013		2014		2015		2016	
Երևան	2	0,32%	4	0,82%	11	2,51%	5	1,23%	6	1.38%
Կոտայք	2	0,32%	8	1,63%	4	0,91%	3	0,74%	2	0.46%
Արմավիր	0	0,00%	0	0,00%	1	0,23%	0	0,00%	0	0.00%
Գեղարքունիք	6	0,95%	2	0,41%	5	1,14%	5	1,23%	11	2.53%
Շիրակ	2	0,32%	1	0,20%	2	0,46%	0	0,00%	0	0.00%
Արարատ	0	0,00%	1	0,20%	3	0,68%	2	0,49%	1	0.23%
Լոռի	2	0,32%	8	1,63%	5	1,14%	4	0,99%	1	0.23%
Արագածոտն	0	0,00%	0	0,00%	0	0,00%	0	0,00%	1	0.23%
Սյունիք	0	0,00%	0	0,00%	0	0,00%	1	0,25%	0	0.00%
Տավուշ	**613**	**97,30%**	**464**	**94,69%**	**405**	**92,26%**	**375**	**92,59%**	**411**	**94.70%**
Վայոց ձոր	0	0,00%	0	0,00%	1	0,23%	0	0,00%	0	0.00%
Այլ երկրներից	3	0,48%	2	0,41%	2	0,46%	10	**2,47%**	**1**	0.23%
Ընդամենը	**630**	100,00%	**490**	100,00%	**439**	100,00%	**405**	100,00%	**434**	100.00%

Դիմորդների ընդհանուր թվի գրեթե 94,7%-ը Տավուշի մարզից են: Այն պայմանավորված է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կողմից մարզում որակյալ կրթություն ապահովելու հանգամանքով, ինչպես նաև տարածաշրջանում միակ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունը լինելու և բարձր հեղինակություն ունենալու փաստերով /հիմք՝ *Արտաքին շահակիցների շրջանում անցկացրած հարցումների արդյունքները*/:

Երևան քաղաքից և այլ մարզերից դիմորդների փոքր տոկոսը պայմանավորված է Երևանում և ՀՀ այլ մարզերում ևս գործող բուհերի առկայությամբ: Ընդհանուր հիմունքներով դիմած օտարերկրացիների թիվը վերջին տարիներին տատանվել է 0,4-2,5%-ի միջակայքում:





Յուցանիշ 1.4. Ընդունելությունն ըստ կրթական աստիճանների (անվճար, վճարովի)

Յուցանիշ 1.4	2012	2013	2014	2015	2016
Բակալավրիատ	178	209	172	161	196
Անվճար	43	41	39	38	40
Վճարովի	135	168	133	123	156
Մագիստրատուրա	10	4	0	0	0
Անվճար	2	2	0	0	0
Վճարովի	8	2	0	0	0

Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցումով (անվճար) տեղերի թիվը մնացել է անփոփոխ (41 տեղ): Թեև ընդունելության արդյունքներով միասնական քննությունները չհաղթահարելու պատճառով մեկ տեղ թափուր է մնացել, այնուամենայնիվ 2016 թվի ընդունելության արդյունքներով անվճար հիմունքներով ընդունվածների թիվը գերազանցել է նախորդ երկու տարիներին:

Վճարովի հիմունքներով տեղերի (364) մի մասը մնացել է թափուր՝ պայմանավորված նախ դիմորդների թվաքանակով, ապա նաև ընդունելության քննությունները չհաղթահարելու հանգամանքով: Չնայած դրան 2016 թվականի ընդունելության արդյունքներով վճարովի հիմունքներով մասնաճյուղ ընդունվածների թվաքանակը ավելացել է նախորդ տարիների համեմատությամբ (բացառությամբ 2013 թվականի արդյունքների):





Յուցանիշ 1.5. ԵՊՀ ԻՄ-ի ընդունելության բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում

Յուցանիշ 1.5	2012	2013	2014	2015	2016
Կենտրոնացված ընդունելության ծավալը	12544	13846	12346	11775	9635
ԵՊՀ ԻՄ ընդունվածների թիվը	178	209	172	161	196
ԵՊՀ ԻՄ բաժնեմասը ընդունելության ընդհանուր ծավալում (%)	**1,42**	**1,51**	**1,39**	**1,37**	**2.03**

2016թ. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ ընդունվածների մասնաբաժինը կենտրոնացված ընդունելության համակարգում աճել է: Այն պայմանավորված է ինչպես նախորդ տարիների համեմատությամբ կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալի նվազմամբ, այնպես էլ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի դիմորդների պատրաստվածությամբ և միասնական, կենտրոնացված ու ներբուհական քննությունների հաղթահարմամբ:





Ցուցանիշ 1.6. Մրցութային ցուցանիշն ըստ կրթական աստիճանների (առկա դիմորդների և ընդունվածների հարաբերությունը)

Ցուցանիշ 1.6	2012	2013	2014	2015	2016
Բակալավրիատի (առկա) դիմորդների թիվը	347	288	222	208	228
Ընդունվածների թիվը	178	209	172	161	196
Մրցութային ցուցանիշը (բակ.)	1.95	1.38	1.29	1.29	1.16
Մագիստրատուրայի դիմորդների թիվը	11	9	0	0	0
Ընդունվածների թիվը	10	4	0	0	0
Մրցութային ցուցանիշը (բակ.)	0	2.25	0	0	0

2012թ.-ից հաշվառված է նաև մագիստրատուրա ընդունվածների թիվը:

Վերջին տարիներին մրցութային ցուցանիշը նվազել է, ինչը պայմանավորված է դիմորդների թվի նվազմամբ և միասնական քննություններից դրական գնահատականի շեմի իջեցմամբ: Վերջին 3 տարիներին մասնաճյուղի դիմորդների 78%-ից 86%-ը հաղթահարել է միասնական քննությունները և ընդունվել մասնաճյուղ: Դրանում իր դերն ունեն նաև դիմորդների բավարար պատրաստվածությունը և միասնական քննությունների համար նախատեսված շտեմարաններում կատարված քիչ փոփոխությունները:







Յուցանիշ 1.7. Իգական սեռի հաշվեկշիռը դիմորդների և ընդունվածների ընդհանուր հոսքում

Յուցանիշ 1.7	2012	2013	2014	2015	2016
ԵՊՀ ԻՄ դիմորդների թիվը	630	499	439	405	434
ԵՊՀ ԻՄ իգական սեռի դիմորդների թիվը	376	255	235	213	241
Հարաբերությունը (դիմորդներ)	**59,7%**	**51,1%**	**53,5%**	**52,6%**	**55.5%**
ԵՊՀ ԻՄ ընդունվածների թիվը	405	408	388	353	397
ԵՊՀ ԻՄ իգական սեռի ընդունվածների թիվը	267	226	193	188	219
Հարաբերությունը (ընդունվածներ)	**65,9%**	**55,4%**	**49,7%**	**53,3%**	**55.1%**

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի վերջին հինգ տարիների ընդունելության արդյունքներով դիմորդների ընդհանուր թվաքանակում իգական սեռի բաժնեմասը տատանվում է 51-60% միջակայքում: Իրողությունը պայմանավորված է ինչպես իգական սեռի շրջանավարտների՝ բարձրագույն կրթություն ստանալու ցանկությամբ, այնպես էլ մասնաճյուղի առկա և հեռակա ուսուցման համակարգերում իրականացվող կրթական ծրագրերի նախընտրությամբ: «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Հայոց լեզու և գրականություն» և «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտությունները 2016թ. նախընտրել են բացառապես իգական սեռի դիմորդները (114 աղջիկ, 1 տղա):

Ընդունվածների ընդհանուր թվաքանակում իգական սեռի բաժնեմասը կազմում է 50-66%, որը պայմանավորված է նաև միասնական քննություններին իգական սեռի լավ պատրաստվածությամբ (բացառություն է կազմում 2014 թվականը): Իգական սեռի ընդունվածների մասնաբաժինը նույն սեռի դիմորդների թվում վերջին 4 տարիներին բավականին կայուն է՝ 82-91%. դա նույնպես վկայում է աղջիկների ավելի լավ պատրաստվածության մասին: Սակայն, հարկ է նշել, որ 2016թ. առկա և հեռակա ուսուցմամբ արական և իգական սեռերի ընդունվածների թվաքանակը տարբեր է (առկա ուսուցմամբ ընդունվել է 141 աղջիկ, 55 տղա, իսկ հեռակա ուսուցմամբ՝ 78 աղջիկ, 123 տղա, նրանց գերակշիռ մասը նախընտրում է ուսումը համատեղել աշխատանքի հետ):





Յուցանիշ 1.8. Օտարերկրյա դիմորդների թիվը և հարաբերությունը ընդունվածների թվին

Յուցանիշ 1.8	2012	2013	2014	2015	2016
Դիմորդների թիվը (բակալավրիատ,առկա)	**0**	**1**	**2**	**1**	**0**
Ընդունվածների թիվը	**2**	**1**	**2**	**1**	**0**
Օտարերկրյա դիմորդների հարաբերությունը ընդունվածների թվին	0	1	1	1	0
Դիմորդների թիվը (մագիստրատուրա)	0	0	0	0	0
Ընդունվածների թիվը	0	0	0	0	0
Օտարերկրյա դիմորդների հարաբերությունը ընդունվածների թվին	0	0	0	0	0
Դիմորդների թիվը (բակալավրիատ,հեռակա)	**2**	**0**	**3**	**9**	**1**
Ընդունվածների թիվը	**2**	**0**	**3**	**9**	**1**
Օտարերկրյա դիմորդների հարաբերությունը ընդունվածների թվին	1	0	1	1	1

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի վերջին հինգ տարիների ընդունելության արդյունքներով օտարերկրյա դիմորդների թիվը բավականին ցածր է: Օտարերկրյա ուսանողների համակազմը մեծացնելու համար հարկավոր է ակտիվացնել աշխատանքները այլ երկրներից /հիմնականում Վրաստանից, Ռուսաստանից/ դիմորդներ ներգրավելու ուղղությամբ, իրականացնել հավաքագրման և ուսուցման կազմակերպման համալիր միջոցառումներ: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը՝ մասնաճյուղում ձևավորվել է Միջազգային կապերի բաժինը (*Հիմք՝10.09.2015թ. գիտխորհրդի թիվ 11 նիստ*):





Ցուցանիշ 1.9. Հեռակա ուսուցման դիմորդների թիվը և հարաբերությունը ընդունվածների թվին

Ցուցանիշ 1.9	2012	2013	2014	2015	2016
Դիմորդների թիվը	272	202	217	197	206
Ընդունվածների թիվը	217	195	216	192	201
Մրցութային ցուցանիշ (Հարաբերությունը)	**1,25**	**1,04**	**1,00**	**1,03**	**1,02**

Հեռակա ուսուցման համակարգում մրցութային ցուցանիշը վերջին հինգ տարիների արդյունքներով տատանվում է 1,0-ից 1,3-ի սահմաններում: Այն պայմանավորված է հեռակա ուսուցման ընդունելության քննություններին դիմորդների բավարար պատրաստվածությամբ, քանի որ նրանց գերակշիռ մասը կարողացել է հաղթահարել գնահատականների նվազագույն շեմը:





Յուցանիշ 1.10. Հիմնական ուսանողական համակազմը (ըստ կրթական աստիճանների)

Յուցանիշ 1.10	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Հիմնական ուսանողական համակազմը	1577	1548	1531	1693	1685
Բակալավրիատ	**637**	**611**	**523**	**666**	**646**
Հումանիտար գիտ. ֆակուլտետ	324	313	259	333	325
Բնական գիտ. ֆակուլտետ	73	65	64	88	117
Տնտեսագիտ. ֆակուլտետ	160	156	132	161	144
Կիրառական արվեստի ֆակուլտետ	80	77	68	84	60
Օտարերկրյա ուս. համակազմը	3	5	4	7	0
Հեռակա ուսուցում	**931**	**924**	**1004**	**1027**	**1039**
Մագիստրատուրա	9	13	4	0	0

Վերջին երկու տարիներին (2015թ. և 2016թ.) առկա ուսուցման ուսանողական համակազմը նախորդ տարիների համեմատությամբ ավելացել է: Այն պայմանավորված է առկա և հեռակա ուսուցմամբ նոր կրթական ծրագրերի համալրմամբ (2016թ. մասնաճյուղում իրականացվող կրթական ծրագրերի ցանկը համալրվել է նոր «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Համակարգչային գրաֆիկա» կրթական ծրագրերով): Հեռակա ուսուցման ուսանողական համակազմում թվաքանակի աճը պայմանավորված է նաև երկրորդ մասնագիտություն ստանալու (ՄՈՒՀ-երի բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտներ, այլ բուհերից փոխադրվողներ կամ դրանց նախկին ուսանողներ), ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակավորում ունենալու, ինչպես նաև ուսումը աշխատանքի հետ համատեղելու հանգամանքով:





Յուցանիշ 1.11. Օտարերկրյա ուսանողների համակազմը և հաշվեկշիռը հիմնական համակազմում

Յուցանիշ 1.11	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
ԵՊՀ ԻՄ ուսանողների համակազմը	1577	1548	1531	1693	1685
Օտարերկրյա ուսանողների համակազմը, այդ թվում՝	3	**5**	**4**	**7**	**0**
Բակալավրիատ	3	5	4	7	0
Մագիստրատուրա	0	0	0	0	0
Օտարերկյա ուսանողների հաշվեկշիռը հիմնական համակազմում (%)	**0,19**	**0,32**	**0,26**	**0,41**	**0**

Օտարերկրյա ուսանողների թիվը ընդհանուր համակազմում չնչին տոկոս է կազմում: Այս բացը լրացնելու համար անհրաժեշտ է մշակել աշխատանքների համալիր ծրագիր, որը կնպաստի բուհի միջազգայնացմանն ու արտաքին կապերի զարգացմանը: Հարկավոր է ակտիվացնել աշխատանքները օտարերկրյա (հիմնականում Վրաստանից, Ռուսաստանից) դիմորդներ ներգրավելու ուղղությամբ: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը՝ մասնաճյուղում ձևավորվել է Միջազգային կապերի բաժին (10.09.2015թ գիտխորհրդի թիվ 11 նիստ):





Յուցանիշ 1.12. Հեռակա ուսուցման հաշվեկշիռը հիմնական համակազմում

Յուցանիշ 1.12	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Հիմնական համակազմը	1577	1548	1531	1693	1685
Հեռակա ուսուցման համակազմը	931	924	1004	1027	1039
Հեռակա ուսուցման հաշվեկշիռը հիմնական համակազմում (%)	**59,0**	**59,69**	**65,58**	**60,66**	**61,66**

Հեռակա ուսուցման համակարգում ուսանողների թվաքանակը վերջին երեք տարիներին ավելացել է կազմելով հիմնական ուսանողական համակազմի 61-65%-ը: Դա պայմանավորված է ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին համապատասխան երկրորդ մասնագիտություն ստանալու ցանկություն ունեցող դիմորդների թվի աճով, 2012թ.-ից սկսած՝ նոր մասնագիտությունների ավելացմամբ, ինչպես նաև ուսումը աշխատանքի հետ համատեղելու հանգամանքով:





Ցուցանիշ 1.13. Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռն ընդունելության ծավալում (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)

Ցուցանիշ 1.13	2012	2013	2014	2015	2016
Ընդունելության ընդհանուր ծավալը	**405**	**408**	**388**	**353**	**397**
Բակալավրիատ(առկա, վճարովի)	135	168	133	123	156
Հեռակա ուսուցում	217	195	216	192	201
Մագիստրատուրա (վճարովի)	8	2	0	0	0
Ընդամենը վճարովի	**360**	**365**	**349**	**315**	**357**
Հաշվեկշիռն ընդունելության ծավալում (%)	**88,9**	**89,5**	**89,9**	**89,2**	**89,9**

Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռն ընդունելության ընդհանուր ծավալում համեմատաբար կայուն է (89-90%), որը պայմանավորված է վերջին հինգ տարիներին պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխատուցմամբ (անվճար) և վճարովի տեղերի համամասնությունների կայունությամբ:





Ցուցանիշ 1.14. Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռը հիմնական համակազմում (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)

Ցուցանիշ 1.14	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Հիմնական համակազմ	1577	1548	1531	1693	1685
Բակալավրիատ(առկա)	438	474	405	512	494
Հեռակա ուսուցում	931	903	987	1027	1039
Մագիստրատուրա	8	9	4	0	0
Ընդամենը վճարովի	1377	1386	1396	1539	1533
Հաշվեկշիռը հիմնական համակազմում (%)	**87,3**	**89,5**	**91,2**	**90,9**	**91.0**

Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռը հիմնական համակազմում վերջին 5 ուստարիների համար գրեթե կայուն է՝ 87%-91%: Տոկոսային բարձր ցուցանիշը պայմանավորված է պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխատուցմամբ (անվճար) տեղերի սահմանափակ լինելու հանգամանքով, ինչպես նաև ուսանողական համակազմում հեռակա ուսուցման ուսանողների թվական գերակշռությամբ:





ԲՆԱԳԱՎԱՌ 2.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Յուցանիշ 2.1.	Անցումն առաջինից երկրորդ կուրս
Յուցանիշ 2.2.	Շրջանավարտներն ըստ կրթական աստիճանների
Յուցանիշ 2.3.	Հիմնական դասախոսական կազմը (բաշխումն ըստ պաշտոնների, գիտական աստիճանով/առանց աստիճանի)
Յուցանիշ 2.4.	Դասախոսական կազմի (լրիվ հաստիքային համարժեքով) բաշխումն ըստ աշխատանքային պայմանագրի ձևերի (հիմնական և համատեղություն, ժամավճար)
Յուցանիշ 2.5.	Դասախոսական կազմի տարեկան համալրումը (այդ թվում՝ ասպիրանտուրայից)
Յուցանիշ 2.6.	Դասախոսական հաստիքների օգտագործման գործակիցը (հաստիքների թիվ/ընդհանուր դասախոսների թիվ)
Յուցանիշ 2.7.	Հիմնական դասախոսական կազմի տարիքային բաշխումը
Յուցանիշ 2.8.	Որակավորման բարձրացում անցած դասախոսների թիվը
Յուցանիշ 2.9.	Իգական սեռի հիմնական դասախոսների հաշվեկշիռը
Յուցանիշ 2.10.	Ուսանող/դասախոս (լրիվ հաստիքային համարժեքով) հարաբերությունը
Յուցանիշ 2.11.	Ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը
Յուցանիշ 2.12.	Դասախոսի միջին տարեկան ուսումնական բեռնվածությունը (այդ թվում՝ ըստ ուղղությունների)
Յուցանիշ 2.13.	Հրատարակված ուսումնամեթոդական նյութերի և մեկ դասախոսին ընկնող մեթոդական հրատարակությունների քանակը
Յուցանիշ 2.14.	Առաջադիմության միջին տարեկան ցուցանիշը (ըստ ֆակուլտետների)
Յուցանիշ 2.15.	Ուսանողական հարցման արդյունքները (ըստ ֆակուլտետների)

Յուցանիշ 2.1. Անցումն առաջինից երկրորդ կուրս /առկա ուսուցման ձև/

Յուցանիշ 2.1	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Բակալավրի ծրագրեր (%)	-	94	93,5	100	97,8
Մագիստրոսական ծրագրեր (%)	-	90	100	-	-

Նկատելի է առաջինից երկրորդ կուրս անցման կայուն ցուցանիշ:

2012/13 ուստարում առկա ուսուցման համակարգում և մագիստրատուրայում բացակայում են երկրորդ կուրս փոխադրվածները, քանի որ 2011/12 ուստարում առկա ուսուցման համակարգում ընդունելություն չի իրականացվել, իսկ մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպվել է 2012թ.-ից, և ժամանակավորապես դադարեցվել է 2014թ.:



Յուցանիշ 2.2. Շրջանավարտներն ըստ կրթական աստիճանների

Յուցանիշ 2.2	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Բակալավրիատ	420	393	188	350	416
Մագիստրատուրա	0	9	4	0	0

2016-2017 ուստարում ամփոփիչ ատեստավորումը հաղթահարել են թվով 416 ուսանողներ (165-ը՝ առկա ուսուցման համակարգում և 251-ը՝ հեռակա ուսուցման համակարգում), այդ թվում 204 շրջանավարտներ ավարտել են հումանիտար գիտությունների ֆակուլտետը, 85-ը՝ բնական գիտությունների, 112-ը՝ տնտեսագիտության և 15-ը՝ կիրառական արվեստի ֆակուլտետները: Նախորդ տարիների համեմատությամբ 2016-2017 ուստարում շրջանավարտների թիվը աճել է՝ պայմանավորված 2012-2013 ուստարվա հեռակա ուսուցմամբ և 2013-2014 ուստարվա առկա ուսուցմամբ ԵՊՀ ԻՄ ընդունվածների բարձր թվով: Նշենք, որ 2014-15 ուստարում մասնաճյուղն առկա ուսուցմամբ շրջանավարտ չի ունեցել:





Ցուցանիշ 2.3. Հիմնական դասախոսական կազմը (ներառյալ ԵՊՀ-ից ներքին համատեղության կարգով հրավիրված դասախոսներ)

Ցուցանիշ 2.3	2012/13		2013/14		2014/15		2015/16		2016/17	
Պրոֆեսոր	3	**3.1%**	3	**3.1%**	3	**3.2%**	3	**3.1%**	3	**3.1%**
Դոցենտ	28	**28.9%**	27	**27.8%**	25	**26.6%**	28	**28.9%**	29	**29.9%**
Ասիստենտ և դասախոս	66	**68.0%**	67	**69.1%**	66	**70.2%**	66	**68.0%**	65	**67.0%**
Ընդամենը	97	**100%**	97	**100%**	94	**100%**	97	**100%**	97	**100%**
Այդ թվում՝ **գիտ. աստիճանով**	39	**40.2%**	38	**39.2%**	38	**40.4%**	45	**46.4%**	53	**54.6%**

Հիմնական դասախոսական կազմում գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը վերջին 2 ուսումնական տարիներին աճել է՝ 46-55%, որը լավ ցուցանիշ է: Այն պայմանավորված է երիտասարդ կադրերի գիտական ձեռքբերումներով և նաև մայր բուհից գիտական աստիճանով պրոֆեսորա-դասախոսական կազմի համալրմամբ:







Յուցանիշ 2.4. Դասախոսական կազմի (լրիվ հաստիքային համարժեքով) բաշխումն ըստ աշխատանքային պայմանագրի ձևերի (հիմնական և համատեղություն, ժամավճար)

Յուցանիշ 2.4	2012/13		2013/14		2014/15		2015/16		2016/17	
Հիմնական և համատեղություն	112	**88.9%**	109	**90.8%**	111	**88.1%**	120	**81.6%**	126	**79.7%**
Ժամավճար	14	**11.1%**	11	**9.2%**	15	**11.9%**	27	**18.4%**	32	**20.3%**
Ընդամենը	**126**		**120**		**126**		**147**		**158**	

Հիմնական և համատեղությամբ դասավանդող դասախոսների թիվը վերջին 5 տարիների համար հիմնականում կայուն է՝ 110-125 դասախոս: Այն 2012-15թթ. նվազել էր առկա ուսուցման ձևում մեկ կուրս չլինելու պատճառով, հետևաբար նաև ամբիոնային ծանրաբեռնվածությունների նվազմամբ:

Ժամավճարային հիմունքով դասավանդողների տոկոսը փոփոխական է, որը կախված է տվյալ ուստարվա առանձնահատկություններից, նոր մասնագիտություններում նեղ մասնագիտական դասընթացներով և հեռակա ուսուցման համակարգում նոր դասավանդողների ներառմամբ:





Յուցանիշ 2.5. Դասախոսական կազմի տարեկան համալրումը

Յուցանիշ 2.5	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Դասախոսական կազմի համալրումը	-2	0	-4	3	0
Հիմնական դասախոսական կազմ	97	97	94	97	97

Հիմնական դասախոսական կազմի թվաքանակը էական փոփոխության չի ենթարկվել, քանի որ մասնագիտությունների քանակում, դասարնթացների ժամաքանակներում, ամբիոնային ծանրաբեռնվածություններում էական փոփոխություններ չեն կատարվել:





Յուցանիշ 2.6. Դասախոսական հաստիքների օգտագործման գործակիցը (հաստիքների թիվ-ընդհանուր դասախոսների թիվ)

Յուցանիշ 2.6	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Ընդհանուր դասախոսական կազմ	112	109	111	120	126
Հաստիքներ	79.75	74.75	79	86.5	84
Հաստիքների թիվ/դասախոսների թիվ հարաբերակցությունը	**0.71**	**0.69**	**0.71**	**0.72**	**0.67**

Վերջին 5 տարիների ընթացքում հաստիքների օգտագործման գործակիցը համեմատաբար կայուն է՝ **0,67-0,72**: Դա պայմանավորված է ծանրաբեռնվածության հստակ նորմատիվների պահպանմամբ, դասավանդողների նեղ մասնագիտացմամբ:





Ցուցանիշ 2.7. Հիմնական դասախոսական կազմի տարիքային բաշխումը (ներառյալ ԵՊՀ-ից ներքին համատեղության կարգով հրավիրված դասախոսները)

Ցուցանիշ 2.7	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Մինչև 35 տարեկան	21	25	23	21	17
35-65 տարեկան	68	62	63	68	69
65-ից բարձր	8	10	8	8	11
Ընդամենը	97	97	94	97	97
Միջին տարիք	**48.0**	**47.7**	**47.6**	**48.0**	**49.1**

Վերջին 5 ուստարիներին հիմնական դասախոսական կազմը կայուն է: Պահպանվել են դասախոսական կազմում տարիքային բաշխման մասնաբաժինները, և միջին տարիքը կազմում է 48-49, որը տարածաշրջանային բուհի համար լավ ցուցանիշ է:







Յուցանիշ 2.8. Որակավորման բարձրացում անցած դասախոսների թիվը

Յուցանիշ 2.8	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Մասնագիտական	1	7	43	2	
Մանկավարժական	32	77	5	1	
Համակարգչային	33	4	8		
Այլ	3	7	31		
Մեկ ուսումնական տարում որակավորման բարձրացում անցած դասախոսների թիվը	***69***	***95***	***87***	***3***	***0***

2011-16թթ. մասնաճյուղում իրականացվել է ԵՊՀ գիտական խորհրդի 2010թ.-ի նոյեմբերի 18-ի թիվ 7 նիստում հաստատված Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիրը, որի շրջանակներում մասնագիտական, մանկավարժական և համակարգչային համապատասխան դասընթաց-ներով որակավորման բարձրացում են անցել մասնաճյուղի դասախոսական կազմի 90-95%-ը:

2016-17 ուստարվա ընթացքում մասնաճյուղում դասախոսական կազմի որակավորման բարձրացման դասընթացներ չեն իրականացվել: ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2017թ. փետրվարի 11-ի թիվ 22 նիստում հաստատվել է նոր կրթագիտական ծրագիրը՝ «Կրեդիտային համակարգով պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը (2017-2021 թթ.)» , որով սկսվել է կրթագիտական ծրագրի իրականացման երկրորդ փուլը:





Յուցանիշ 2.9. Իգական սեռի հիմնական դասախոսների հաշվեկշիռը

Յուցանիշ 2.9	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Հիմնական դասախոսական կազմ	97	97	94	97	97
Իգական սեռի դասախոսներ	52	61	50	43	51
Իգական սեռի հաշվեկշիռը (%)	**53.6**	**62.9**	**53.2**	**44.3**	**52.6**

Վերջին 5 ուստարիներին հիմնական դասախոսական կազմում իգական սեռի մասնաբաժինը հիմնականում կազմում է ավելի քան 50%, որը պայմանավորված է տարածաշրջանի ժողովրդագրական պատկերով, և մասնաճյուղի համար կարելի է համարել լավ ցուցանիշ է: 2015-16 ուստարվա համար այն կազմել է 44.3%, ինչը հիմնականում պայմանավորված է մայր բուհից հիմնականում տղամարդ դասախոսների ներգրավմամբ և նոր երիտասարդ կադրերով համալրմամբ:





Յուցանիշ 2.10. Ուսանող/դասախոս (լրիվ հաստիքային համարժեքով) հարաբերությունը

Յուցանիշ 2.10	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Ուսանողներ	1577	1548	1531	1693	1685
Դասախոսական հաստիքներ	79.75	74.75	79	86.5	84
Ուսանող/դասախոս հարաբերությունը	**19.77**	**20.71**	**19.38**	**19.57**	**20.06**

Վերջին 5 տարիների կտրվածքով ուսանող/դասախոս հարաբերակցությունը համեմատաբար կայուն է՝ մեկ դասախոսին 20 ուսանող, ինչը պայմանավորված է ուսանողների թվի և դասախոսական հաստիքների համամասնական փոփոխությամբ:

Ուսանողների թվաքանակն ընդգրկում է նաև հեռակա ուսուցման համակարգով սովորողներին:





Յուցանիշ 2.11. Ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը

Յուցանիշ 2.11	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Ուսանողներ	1577	1548	1531	1693	1685
Ուսումնաօժանդակ կազմ	26	26	25	24	27
Ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը	**60.65**	**59.54**	**61.24**	**70.54**	**62.41**

2012-15թթ. տարիներին նկատվում է ցուցանիշի կայունություն՝ 1 ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցչին 60-ից 61 ուսանող, որը պայմանավորված է ուսանողների և ուսումնաօժանդակ կազմի թվաքանակի քիչ փոփոխությամբ և մեկ կուրսի բացակայությամբ: Իսկ 2015-16 ուստարում այդ ցուցանիշը հասել է գրեթե 71-ի, ինչը պայմանավորված է ուսանողների թվաքանակի աճով, և որը հաջորդ ուստարում ավելացրել է ուսումնաօժանդակ անձնակազմի թվաքանակը:









Յուցանիշ 2.12. Դասախոսի միջին տարեկան ուսումնական բեռնվածությունը (ըստ ուղղությունների)

Յուցանիշ 2.12	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	732	886	814.5	825,9	929,1
Բնական գիտությունների ֆակուլտետ	717	818	821.8	761,9	968,3
Տնտեսագիտության ֆակուլտետ	607	785	803.7	885,6	886,1
Կիրառական արվեստի ֆակուլտետ	671	676	765.5	730,4	675,2
Համահամալսարանական ամբիոններ	738	687	853.5	875,6	763,2
Համահամալսարանական միջինը	**693**	**770**	**811.8**	**815,9**	**844,4**

Մասնաճյուղում միջին տարեկան բեռնվածությունը 2012-13, 2013-14, 2014-15 և 2015-16 ուստարիներին սահմանված նորմերի համաձայն մոտավորապես կազմել է 700-800 ժամ: Վերջին 3 ուստարիներին բոլոր ֆակուլտետներում դասախոսի միջին տարեկան բեռնվածությունը գերազանցում է սահմանված նորմատիվը, որը պայմանավորված է մասնաճյուղի ղեկավարության կողմից ֆինանսական ռեսուրսների խնայողության քաղաքականության իրականացմամբ, այսինքն այլ մասնագետներ չհրավիրելու և առկա բարձրակարգ կադրերին նպատակային ծանրաբեռնելու միջոցով:



Յուցանիշ 2.13. Հրատարակված ուսումնամեթոդական նյութերի և մեկ դասախոսին ընկնող մեթոդական հրատարակությունների քանակը

Յուցանիշ 2.13	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Ուսումնամեթոդական նյութերի քանակը	8	8	15	16	7
Հիմնական դասախոսական կազմը	97	97	94	97	70
Մեկ դասախոսին ընկնող մեթոդական հրատարակությունների թիվը	**0.08**	**0.08**	**0.16**	**0.16**	**0.10**

2014-15 և 2015-16 ուսումնական տարիներին ուսումնամեթոդական նյութերի քանակը կրկնակի ավելացել է, որը պայմանավորված է ուսումնամեթոդական աշխատանքներ ներկայացնող դասավանդող-ներին մասնաճյուղի ցուցաբերած աջակցության ու խրախուսման քաղաքականության իրականացմամբ: 2016-17 ուստարվա մեկ դասախոսին ընկնող մեթոդական հրատարակությունների 0.10 թիվը պայմանավորված է պահանջների փոփոխությամբ և այն ներկայացնում է միայն մասնաճյուղի 70 հիմնական դասավանդողների՝ (առանց ԵՊՀ-ից հրավիրվածների) կողմից հրատարակված ուսումնամեթոդական նյութերի քանակը::





Յուցանիշ 2.14. Առաջադիմության միջին տարեկան ցուցանիշը (ըստ ֆակուլտետների)

Յուցանիշ 2.14	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ(%)	85,5	74,1	74,9	88,4	87.0
Բնական գիտությունների ֆակուլտետ (%)	74,4	50,8	66,2	76,6	77.1
Տնտեսագիտության ֆակուլտետ (%)	56,3	59,6	60,6	76,5	72.4
Կիրառական արվեստի ֆակուլտետ (%)	75,8	57,9	76,4	78	93.1
Միջին տարեկան ցուցանիշը(%)	73,0	60,6	69,5	79,9	82.4

Առաջադիմության (լուծարքային շրջանից առաջ) միջին տարեկան ցուցանիշը տարեցտարի աճում է, ինչը պայմանավորված է դասընթացի կամ կրթական մոդուլի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռբերման գործում դասախոսների և ուսանողների կողմից դասավանդման և ուսումնառության միջոցների /պարբերաբար ստուգման/ և մեթոդների շարունակական բարելավմամբ:







Ցուցանիշ 2.15. Ուսանողական հարցման արդյունքները (ըստ ֆակուլտետների)

Ցուցանիշ 2.15	2012/13		2013/14		2014/15		2015/16		2016/17
	I կիս.	II կիս.	I կիս.	II կիս.	I կիս.	II կիս.	I կիս.	II կիս.	I կիս.
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	4,59	4,55	4,62	4,54	4,58	4,49	4,58	4,63	4,68
Բնական գիտությունների ֆակուլտետ	4,43	4,38	4,47	4,46	4,56	4,56	4,56	4,62	4,40
Տնտեսագիտական ֆակուլտետ	4,61	4,54	4,58	4,66	4,73	4,74	4,66	4,78	4,81
Կիրառական արվեստի ֆակուլտետ	4,44	4,46	4,78	4,72	4,78	4,8	4,76	4,86	4,81
Համահամալսարանական ամբիոններ	4,5	4,59	4,56	4,56	4,58	4,53	4,56	4,56	4,54

Ուսանողների կողմից դասախոսական կազմի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման հարցաթերթիկում հարցերը գնահատվում են 5-միավորանոց սանդղակով: Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողներն ընդհանուր առմամբ գոհ են դասավանդողների մասնագիտական և մանկավարժական որակներից, վարչական և ուսումնաօժանդակ ծառայություններից: Ընդ որում այդ ցուցանիշները վերջին 3 ուստարիների համար բավականին բարելավվել են:



ԲՆԱԳԱՎԱՌ 3.

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Յուցանիշ 3.1.	Աշխատողների ընդհանուր թիվը, ուսանող/աշխատող
Յուցանիշ 3.2.	Դասախոսական կազմ/ուսումնաօժանդակ և վարչական կազմ հարաբերակցությունը
Յուցանիշ 3.3.	Աշխատողների հոսունությունը՝ ընդունված/ազատված (%)
Յուցանիշ 3.4.	Տարեկան բյուջեն (տարեկան ընդհանուր եկամուտը՝ ֆինանսական և նյութական, հազար դրամ)
Յուցանիշ 3.5.	Օպերատիվ բյուջեն (ծախսերի ծավալ/ուսանող և մուտքերի ծավալ/ուսանող հարաբերակցությունները, հազար դրամ)
Յուցանիշ 3.6.	Տարեվերջից տեղափոխվող մնացորդը (հազար դրամ)
Յուցանիշ 3.7.	Արտաբյուջետային մուտքեր (ըստ աղբյուրների, ընդհանուր), հաշվեկշիռը մուտքերում (հազար դրամ)
Յուցանիշ 3.8.	Ուսումնական (ուսուցման) ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում
Յուցանիշ 3.9.	Ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում (հազար դրամ)
Յուցանիշ 3.10.	Ուսման միջին վարձաչափը (հազար դրամ)
Յուցանիշ 3.11.	Դասախոսական կազմի միջին աշխատավարձը, հարաբերությունը հայաստանյան պաշտոնական միջինին
Յուցանիշ 3.12.	Աշխատավարձ և սոցիալական հատկացումներ/ծախսեր հարաբերակցությունը
Յուցանիշ 3.13.	Արտաբյուջետային մուտքեր/բյուջետային մուտքեր հարաբերակցությունը
Յուցանիշ 3.14.	Ծախսերի ծավալ/բյուջետային ծախսերի ծավալ հարաբերակցությունը
Յուցանիշ 3.15.	Հարկերի ծավալ/փաստական պետական մուտքեր հարաբերակցությունը

Յուցանիշ 3.1. Աշխատողների ընդհանուր թիվը, ուսանող-աշխատող հարաբերակցությունը

Յուցանիշ 3.1	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Աշխատողների ընդհանուր թիվը	212	206	199	226	245
Ուսանողների թիվը	1577	1548	1531	1693	1685
Ուսանող/աշխատող հարաբերակցությունը	**7.4**	**7.5**	**7.7**	**7.5**	**6.9**

Տարեցտարի ուսանողների թվի նվազման հետ նվազել է նաև աշխատողների թիվը: Վերջին 2 ուստարիներին ուսանողների թվի աճին համապատասխան ավելացել է նաև աշխատողների թիվը, ինչը պայմանավորված է նաև վճարովի ծառայություններ մատուցող աշխատակիցների և ժամավճարով աշխատող դասախոսների ներգրավմամբ: Ուսանող-աշխատող հարաբերությունը վերջին 5 ուստարիների համար համեմատաբար կայուն է՝ յուրաքանչյուր աշխատողին 7 ուսանող:





Ցուցանիշ 3.2. Դասախոսական կազմ-ուսումնաօժանդակ և վարչական կազմ հարաբերակցությունը

Ցուցանիշ 3.2	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Դասախոսական կազմը	112	109	111	120	126
Ուսումնաօժադակ և վարչական կազմ	86	85	75	76	81
Դասախոսական կազմ-ուսումնաօժանդակ և վարչական կազմ հարաբերակցությունը	**1.30**	**1.28**	**1.48**	**1.58**	**1.56**

Պայմանավորված ուսումնաօժանդակ և վարչական կազմերի օպտիմալացումով և դասախոսական կազմի համալրումով վերջին 3 ուստարիներին դասախոսական կազմ-ուսումնաօժանդակ և վարչական կազմ հարաբերակցության ցուցանիշը փոքր-ինչ աճել է:







Ցուցանիշ 3.3. Աշխատողների հոսունությունը՝ ընդունված/ազատված (%)

Ցուցանիշ 3.3	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Դասախոսական կազմում (%)	35.7	41.3	36.9	4.24	1.96
Ընդհանուրում (%)	30.3	27.6	26.6	6.8	0.97

Աշխատողների հոսունության ցուցանիշները պայմանավորված են ժամավճարային հիմունքներով դասավանդողների բաժնեմասով և Երևանից հրավիրված այն մասնագետների փոփոխությամբ, որոնք չեն հարմարվում երկար ճանապարհին: Սակայն վերջին տարիներին ցուցանիշի նվազման միտում է նկատվում, ինչը վկայում է աշխատողների կայունության մասին:



Յուցանիշ 3.4. Տարեկան բյուջեն
(տարեկան ընդհանուր եկամուտը՝ ֆինանսական և նյութական, հզ. դր.)

Յուցանիշ 3.4	2012	2013	2014	2015	2016
Դրամական միջոցները տարեսկզբին	137953	148820	220346	272955	128810
Եկամուտներ վճարովի ուսուցման ծառայությունից	315356	332564	348175	348714	379585
Եկամուտներ պետական բյուջեից	85743	82209	82070	97641	116979
Այլ եկամուտներ	9111	14544	17367	27146	26065
Ընդամենը տարեկան եկամուտներ	**410210**	**429317**	**447612**	**473501**	**522629**
Տարեկան բյուջեն	**548163**	**578137**	**667958**	**746456**	**651439**

2016թ-ին մասնաճյուղի եկամուտները վճարովի ուսուցման համակարգից 2012թ-ի համեմատ աճել են 20,4%-ով, իսկ պետական բյուջեից եկամուտները նախ նվազել են 2011-12 ուստարում առկա համակարգում ընդունելության բացակայության պատճառով, իսկ 2016 թվին 2012-ի համեմատ այն աճել է 36,4%-ով, որը հիմնականում պայմանավորված է վճարովի ուսուցման համակարգում ուսանողների թվի ավելացմամբ, վարձավճարների բարձրացմամբ, ինչպես նաև պետության կողմից հատկացվող անվճար տեղերի թվի կրճատմամբ: Այլ եկամուտների մասով իրականացվում են բազմաբնույթ քայլեր, որի առաջին օրինակը Մասնաճյուղի զարգացման բիզնես ծրագրի մշակման մշտական հանձնաժողովի ստեղծումն է: Այդուհանդերձ, ընդհանուր տարեկան եկամուտները 2012թ.-ի նկատմամբ աճել են մոտ 27,4%-ով: Սակայն հարկ է նշել, որ 2016թ. տարեկան բյուջեն նախորդի համեմատ նվազել է տարեսկզբին դրամական ավելի քիչ միջոցների փոխանցման հաշվին:





Ցուցանիշ 3.5. Օպերատիվ բյուջեն
(ծախսերի ծավալ-ուսանող և մուտքերի ծավալ-ուսանող հարաբերակցությունները, հզ. դր.)

Ցուցանիշ 3.5	2012	2013	2014	2015	2016
Ուսանողների թիվը	1582	1535	1552	1517	1565
Եկամուտների ծավալ	548163	578137	667958	746456	651439
Եկամուտների ծավալ/ուսանող հարաբերակցությունը	**346.5**	**376.6**	**430.4**	**492.1**	**416.3**
Ծախսերի ծավալ	334100	348782	372427	417723	435513
Ծախսերի ծավալ/ուսանող հարաբերակցությունը	**211.2**	**227.2**	**240.0**	**275.4**	**278.3**

2016թ-ին մեկ ուսանողին ընկնող եկամուտների ծավալը նախորդ տարվա համեմատ էապես նվազել է: Դա պայմանավորված է եկամուտների ծավալի նվազմամբ, որի մասին նշվեց Ցուցանիշ 3.4-ում: Իսկ մեկ ուսանողին ընկնող ծախսերի ծավալն անընդհատ աճել է՝ կապված տեխնիկապես հագեցած լսարանների և համակարգչային սրահների համալրմամբ, նոր մասնագիտական գրականության ձեքբերմամբ, նաև ուսումնական տարածքի վերանորոգմամբ:







Յուցանիշ 3.6. Տարեվերջից տեղափոխվող մնացորդը (հզ. դր.)

Յուցանիշ 3.6	2012	2013	2014	2015	2016
Տարեվերջից տեղափոխվող մնացորդը	148 820	220 346	272 955	128 810	217 100

Տարեվերջից տեղափոխվող մնացորդը 2012-14 տարիների համար զգալի աճել է, որն իր արտահայտությունն է գտնում տարվա տարեկան բյուջեում, իսկ 2015-ին հաջորդ տարի փոխանցված մնացորդը գրեթե 2 անգամ փոքր է եղել նախորդ տարվա մնացորդից, ինչը վկայում է 2015թ.-ին իրականացված զգալի ծախսերի մասին, 2016թ-ի համար այն նորից աճել է խնայողությանն ուղղված գործունեության արդյունքում:





Ցուցանիշ 3.7. Արտաբյուջետային մուտքեր (ըստ աղբյուրների, ընդհանուր), հաշվեկշիռը մուտքերում (հզ. դր.)

Ցուցանիշ 3.7	2012	2013	2014	2015	2016
Ընդամենը տարեկան եկամուտներ	410210	429317	447612	473501	522629
Արտաբյուջետային մուտքեր, այդ թվում՝	**322544**	**347109**	**365542**	**375860**	**405650**
Վճարովի ուսուցման ծառայությունից	315356	332564	348175	348714	379585
Բարեգործական եկամուտներ	0	0	0	640	461
Առևտրային բանկերում ավանդ ձևակերպված գումարներից ստացվող %-ներից եկամուտներ	5477	10445	12707	21500	21888
Այլ եկամուտներ	1711	4100	4660	5006	3716
Տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտներում (%)	**78.6**	**80.9**	**81.7**	**79.4**	**77.6**

Ընդհանուր տարեկան եկամուտների մեջ վերջին 2 տարիներին արտաբյուջետային միջոցների տեսակարար կշիռը նվազել է և կազմում է մոտ 78%: Արտաբյուջետային միջոցների 93,6%-ը կազմում են վճարովի ուսուցման ծառայությունից ստացված եկամուտները: Բարեգործական և այլ եկամուտները կայուն չեն, իսկ դրամական շնորհներ և լրացուցիչ կրթական դասընթացներ չունենալու պատճառով մուտքերը 0-ական են:







Յուցանիշ 3.8. Ուսումնական (ուսուցման) ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում(հզ. դր.)

Յուցանիշ 3.8	2012	2013	2014	2015	2016
Տարեկան ընդհանուր ծախսեր	334100	348782	372427	417723	435513
Ուսումնական ծախսեր	150345	160500	171600	200500	210400
Ուսումնական ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում (%)	**45.0**	**46.0**	**46.1**	**48.0**	**48.3**

Վերջին հինգ տարիներին ուսումնական ծախսերն աճել են մոտ 40%-ով, այն դեպքում, երբ տարեկան ընդհանուր ծախսերը 2012թ.-ի համեմատ աճել են գրեթե 31%-ով: Հետևաբար, տարեկան ընդհանուր ծախսերում ուսումնական ծախսերի հաշվեկշիռը մեծացել է, սակայն այն համեմատաբար կայուն է և գտնվում է 45%-48% միջակայքում: 2012թ-ի համեմատ զգալի աճել են նաև մեկ ուսանողին ընկնող ուսումնական ծախսերը (41.5%-ով):







Յուցանիշ 3.9. Ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում (հզ. դր)

Յուցանիշ 3.9	2012	2013	2014	2015	2016
Տարեկան ընդհանուր ծախսեր	334100	348782	372427	417723	435513
Ուսումնաօժանդակ ծախսեր	35090	36810	37500	42700	48300
Ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը (%)	10.5	10.6	10.1	10.2	11.1

Վերջին 4 տարիների ընթացքում ուսումնաօժանդակաև ծախսերն աճել են գրեթե 38%-ով, իսկ միայն նախորդ տարվա համեմատ 13,1%-ով, իսկ ընդհանուր տարեկան ծախսերում ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը ընդհանուր առմամբ կայուն է և կազմել է 10%-11%, որը հիմնավորվում է օպտիմալ ուսումնաօժանդակ անձնակազմի և անհրաժեշտ պայմանների առկայությամբ:







Ցուցանիշ 3.10. Ուսման միջին վարձաչափը (հզ. դր.)

Ցուցանիշ 3.10	2012	2013	2014	2015	2016
ՀՀ քաղաքացիների համար միջին վարձաչափը	230	250	260	300	320

Ուսման միջին վարձաչափը վերջին երկու տարիներին աճել է, մասնավորապես 2012թ.-ի համեմատ աճել է մոտ 40%-ով, որը հիմնականում պայմանավորված է ուսումնառության համար անհրաժեշտ ծախսերի ավելացմամբ, նաև հանրապետությունում բուհերում ուսման վարձավճարների նկատմամբ ընդհանուր քաղաքականությամբ:



Ցուցանիշ 3.11. Դասախոսական կազմի միջին աշխատավարձը, հարաբերությունը հայաստանյան պաշտոնական միջինին

Ցուցանիշ 3.11	2012	2013	2014	2015	2016
Պրոֆեսոր	96000	96000	113000	124069	124069
Դոցենտ	93000	93000	108000	118758	118758
Ասիստենտ և դասախոս	89000	89000	103000	113167	113167
Դասախոսական միջին աշխատավարձը	92000	92000	108000	118665	118665
ՀՀ միջին աշխատավարձը	121374	156297	175200	180000	187850
Դասախոսական կազմի միջին աշխատավարձի հարաբերությունը հայաստանյան պաշտոնական միջինին	**0.76**	**0.59**	**0.62**	**0.66**	**0.63**

Դասախոսական կազմի միջին աշխատավարձի հարաբերությունը հայաստանյան պաշտոնական միջինին վերջին հինգ տարիների ընթացքում նվազել է, որը պայմանավորված է ԵՊՀ ԻՄ-ի դասախոսական կազմի միջին աշխատավարձի անփոփոխ, իսկ հայաստանյան պաշտոնական միջին աշխատավարձի աճի տեմպերով: 2014թ.-ից նկատվել է վերոնշյալ ցուցանիշի որոշակի աճ՝ **0,59-0,66**, որը պայմանավորված է 2012թ-ի համեմատ դասախոսական կազմի միջին աշխատավարձի 29%-ով բարձրացմամբ:







Յուցանիշ 3.12. Աշխատավարձ և եկամտային հարկ-ծախսեր հարաբերակցությունը

Յուցանիշ 3.12	2012	2013	2014	2015	2016
Աշխատանքի վարձատրության ծախսեր (հզ.դր.)	217000	212759	227264	257686	267613
Եկամտային հարկ (հզ. դր.)	41300	66097	74550	84864	91461
Ընդամենը աշխատավարձի և սոց. վճարների ծախսեր (հզ. դր.)	258300	278856	301814	342550	359074
Տարեկան ընդհանուր ծախսեր (հզ. դր.)	334100	348782	372427	417723	435513
Աշխատավարձ և սոցիալական հատկացումներ /ծախսեր հարաբերակցությունը	**0.77**	**0.80**	**0.81**	**0.82**	**0.82**

Ծախսերի ընդհանուր ծավալում գերակշռում են աշխատանքի վարձատրության և եկամտային հարկի ծախսերը՝ 77%-82%, (ինչը պայմանավորված է կազմակերպության գործունեության բնույթով, կազմակերպա-իրավական ձևով), այն 2012թ.-ին վերջին 5 տարիների համար ունեցել է ամենացածր ցուցանիշը՝ պայմանավորված աշխատակից-ների թվի նվազմամբ: Իսկ տվյալ ցուցանիշի վերջին 3 տարիների աճը հիմնավորվում է հարկային համապատասխան օրենքների փոփոխություններով (եկամտային հարկ):









Ցուցանիշ 3.13. Արտաբյուջետային մուտքեր-բյուջետային մուտքեր հարաբերակցությունը

Ցուցանիշ 3.13	2012	2013	2014	2015	2016
Արտաբյուջետային մուտքեր (հզ. դր.)	322544	347109	365542	375860	405650
Պետական բյուջեից ստացվող մուտքեր (հզ. դր.)	85743	82209	82070	97641	116979
Արտաբյուջետային մուտքեր/բյուջետային մուտքեր հարաբերակցությունը	3.8	4.2	4.5	3.8	3.5

2012-14թթ. այս ցուցանիշի աճը (3,8-4,5) պայմանավորված է պետական բյուջեից մուտքերի նվազմամբ՝ պայմանավորված ուսանողների և աշխատակազմի թվի նվազմամբ՝ մեկ կուրս չունենալու պատճառով և արտաբյուջետային մուտքերի անընդհատ աճով՝ պայմանավորված վճարովի տեղերի թվի ավելացմամբ, այլ եկամուտների ձևավորմամբ: 2015թ.-ից այդ ցուցանիշը սկսել է նվազել պետական բյուջեից մուտքերի ծավալի մեծացման հաշվին:





Յուցանիշ 3.14. Ծախսերի ծավալ-բյուջետային ծախսերի ծավալ հարաբերակցությունը

Յուցանիշ 3.14	2012	2013	2014	2015	2016
Բյուջետային ծախսերի ծավալ (հզ. դր.)	85743	82209	82070	97641	116979
Արտաբյուջետային ծախսերի ծավալ (հզ. դր.)	248357	266573	290357	320082	318534
Ծախսերի ընդհանուր ծավալ (հզ. դր.)	334100	348782	372427	417723	435513
Ծախսերի ծավալ/ բյուջետային ծախսերի ծավալ հարաբերակցությունը	**3.90**	**4.24**	**4.54**	**4.28**	**3.72**

Ծախսերի ընդհանուր ծավալ և բյուջետային ծախսերի ծավալ հարաբերակցությունը 2012-2014թթ.-ի համար աճել է (3,90-4,54), որը պայմանավորված է արտաբյուջետային ծախսերի, հետևաբար նաև ընդհանուր ծախսերի ծավալի ավելացմամբ և պետական բյուջեի հաշվին ծախսերի կրճատմամբ: 2014-16թթ.-ի համար այդ հարաբերակցությունը նվազել է բյուջետային ծախսերի ծավալի աճի պատճառով:







Յուցանիշ 3.15. Հարկերի ծավալ - փաստական պետական մուտքեր հարաբերակցությունը

Յուցանիշ 3.16	2012	2013	2014	2015	2016
ԵՊՀ ԻՄ-ի կողմից պետական բյուջե վճարվող հարկեր (հզ. դր.)	50300	66475	78783	84864	102926
Պետական բյուջեից ԵՊՀ ԻՄ ֆինանսավորման չափը (հզ. դր.)	85743	82209	82070	97641	116979
Հարկերի ծավալ / փաստական պետական մուտքեր հարաբերակցությունը	**0.59**	**0.81**	**0.96**	**0.87**	**0.88**

Վերջին 3 տարիների ընթացքում պետական բյուջեից ԵՊՀ ԻՄ-ի ֆինանսավորման ծավալների (որը մինչև 2014թ. ներառյալ տարեցտարի նվազել է) 81%-96%-ը ԵՊՀ ԻՄ-ի կողմից հետ է վերադարձվել պետական բյուջե՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների տեսքով: Միայն 2016թ-ին ԵՊՀ ԻՄ-ի կողմից պետական բյուջե վճարվող հարկերի ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է 21%-ով, այն դեպքում, երբ պետական բյուջեից մասնաճյուղի ֆինանսավորումն աճել է 19,8%-ով, թեպետ 2015թ-ից պետական բյուջեից ֆինանսավորումը զգալի աճում է յուրաքանչյուր նախորդ տարվա համեմատ:







ԲՆԱԳԱՎԱՌ 4.

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Յուցանիշ 4.1.	Մեկ ուսանողին ընկնող ընդհանուր տարածքը
Յուցանիշ 4.2.	Մեկ ուսանողին ընկնող ուսումնական (լսարանային) տարածքը
Յուցանիշ 4.3.	Մեկ ակադեմիական խմբին ընկնող լսարանների քանակը
Յուցանիշ 4.4.	Մեկ ուսանողին ընկնող գրքերի թիվը գրադարանում
Յուցանիշ 4.5.	Մեկ ուսանողին ընկնող գրականության ձեռքբերման տարեկան ծախսերը, նոր գրքերի և ամսագրերի տարեկան թիվը
Յուցանիշ 4.6.	Գրադարանի տարեկան աբոնենտների (ընթերցողների) հարաբերությունը ԵՊՀ ԻՄ ուսանողների և դասախոսների թվին
Յուցանիշ 4.7.	Շահագործման ծախսերի տեսակարար կշիռը ԵՊՀ ԻՄ ծախսերի համագումարում
Յուցանիշ 4.8.	Մեկ ուսանողին ընկնող տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը
Յուցանիշ 4.9.	Տարեկան էներգածախսը, մեկ մարդուն ընկնող տարեկան էներգածախսը
Յուցանիշ 4.10.	Տարեկան ջրածախսը, մեկ մարդուն ընկնող տարեկան ջրածախսը

Յուցանիշ 4.1. Մեկ ուսանողին ընկնող ընդհանուր տարածքը

Յուցանիշ 4.1	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
ԵՊՀ ԻՄ ընդհանուր տարածքը /մ ²/	13195	13195	13195	13195	13195
Ուսանողների թիվը	1577	1548	1531	1693	1685
Մեկ ուսանողին ընկնող ընդհանուր տարածքը /մ²/	**8.4**	**8.5**	**8.6**	**7.8**	**7.8**

Մեկ ուսանողին բաժին ընկնող ընդհանուր տարածքը մինչև 2014-15 ուստարին ավելացել է ուսանողների թվի նվազման հաշվին, որը պայմանավորված է 2011-12 ուստարվանից մինչև 2014-15 ուստարին ներառյալ առկա ուսուցման համակարգում մեկ կուրսի բացակայությամբ: 2015-16 ուստարում ուսանողների թվաքանակն ավելացել է կուրսերի ամբողջացման հաշվին, որի հետևանքով մեկ ուսանողին ընկնող ընդհանուր տարածքը նվազել է:





Յուցանիշ 4.2. Մեկ ուսանողին ընկնող ուսումնական (լսարանային) տարածքը

Յուցանիշ 4.2	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Ուսումնական տարածքը /մ²/	8400	8400	8400	8400	8400
Ուսանողների թիվը	1577	1548	1531	1693	1685
Մեկ ուսանողին ընկնող ուսումնական տարածքը /մ²/	**5.33**	**5.43**	**5.49**	**4.96**	**4.99**

Վերջին տարիներին մեկ ուսանողին բաժին ընկնող ուսումնական տարածքն ավելացել է ավելի քան 14,5%-ով, որը պայմանավորված է ուսանողների թվաքանակի նվազմամբ: Վերջին երկու տարիներին մեկ ուսանողին ընկնող տարածքը հաստատուն է (5,5մ²):

Ուսանողների թվաքանակի մեջ ներառված են նաև հեռակա ուսուցման բաժնի ուսանողները, որոնց դասապրոցեսը կազմակերպվում է երկրորդ հերթափոխով:







Յուցանիշ 4.3. Մեկ ակադեմիական խմբին ընկնող լսարանների քանակը

Յուցանիշ 4.3	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Ակադեմիական խմբերի թիվը (միջինը՝ 36 ուսանող խմբում)	61	63	64	74	82
Լսարանային ֆոնդը (լսարանների քանակը)	53	53	53	53	56
Մեկ ակադեմիական խմբին ընկնող լսարանների քանակը	**0.9**	**0.8**	**0.8**	**0.7**	**0.7**

Վերջին 4 տարիների ընթացքում ակադեմիական խմբերի թիվը աճել է, որը պայմանավորված է մասնաճյուղում նոր կրթական ծրագրերի իրականացմամբ, արդյունքում նրանց համար ստեղծվել են նոր լսարաններ, հետևաբար 2016-17 ուստարում լսարանների թիվն ավելացել է:

2011/12 ուստարվանից սկսած ուսանողների թվաքանակի մեջ ներառված են նաև Հեռակա ուսուցման բաժնի ուսանողները, որոնց դասապրոցեսը կազմակերպվում է երկրորդ հերթափոխով:



Յուցանիշ 4.4. Մեկ ուսանողին ընկնող գրքերի թիվը գրադարանում

Յուցանիշ 4.4	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Գրքերի թիվը	11021	12042	14235	14559	14908
ԵՊՀ ԻՄ ուսանողների թիվը	1577	1548	1531	1693	1685
Մեկ ուսանողին ընկնող գրքերի թիվը գրադարանում	**7.0**	**7.8**	**9.3**	**8.6**	**8.8**

Ուսանողներին հասանելի գրականության թիվը տարեցտարի ավելացել է, սակայն այս ցուցանիշն անհրաժեշտ է անընդհատ բարելավել: Զուգահեռ ստեղծվել է նաև էլեկտրոնային գրադարան՝ դասավանդվող բոլոր մոդուլների էլեկտրոնային դասախոսությունների և հիմնական դասագրքերի թվայնացված տարբերակներով:





Յուցանիշ 4.5. Մեկ ուսանողին ընկնող գրականության ձեռքբերման տարեկան ծախսերը, նոր գրքերի և ամսագրերի տարեկան թիվը

Յուցանիշ 4.5	2012	2013	2014	2015	2016
Նոր գրքերի տարեկան թիվը	682	1059	1105	909	709
Նոր ամսագրերի տարեկան թիվը	58	120	125	374	50
Գրականության ձեռքբերման տարեկան ծախսերը (հզ. դր.)	**229.3**	**516**	**363**	**848**	**279**
ԵՊՀ ԻՄ ուսանողների թիվը	1577	1548	1531	1693	1685
Մեկ ուսանողին ընկնող գրականության ձեռքբերման տարեկան ծախսերը (դր.)	**145.4**	**333.3**	**237.1**	**500.9**	**165.6**

Թեև նոր գրքերի և ամսագրերի թիվն անընդատ աճում է, սակայն գրականություն ձեռք բերելու համար տարեկան ծախսերը փոփոխական են՝ պայմանավորված գրականության նկատմամբ ունեցած պահանջով, հրատարակված նոր մասնագիտական գրականության անհրաժեշտությամբ, մասնագիտական գրքերի բարձր գներով, ինչպես նաև նոր մասնագիտությունների համար անհրաժեշտ գրականությամբ:





Յուցանիշ 4.6. Գրադարանի տարեկան աբոնենտների (ընթերցողների) հարաբերությունը ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների և դասախոսների թվին

Յուցանիշ 4.6	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Նոր աբոնենտների թիվը	270	265	220	265	254
Ընդհանուր աբոնենտների /ընթերցողների / թիվը	1191	1272	1230	1272	1034
ԵՊՀ ԻՄ դասախոսների և ուսանողների թիվը	1689	1657	1642	1813	1811
Տարեկան աբոնենտներ /դասախոսներ և ուսանողներ հարաբերությունը	0.71	0.77	0.75	0.70	0.57

2012-16թթ. ընթացքում գրադարանի տարեկան աբոնենտների հաշվեկշիռը դասախոսների և ուսանողների թվի մեջ համեմատաբար կայուն է՝ 70%-77%, որը պայմանավորված է ինչպես գրադարանային ֆոնդի հարստացմամբ և արդիականացմամբ, այպես էլ համացանցին միացված համակարգիչների տեղադրմամբ:

Գրադարանի նոր աբոնենտների միջին թիվը վերջին 5 տարիների համար 255 է: Նոր աբոնենտների թվի նվազումը պայմանավորված է շրջանավարտների և 1-ին կուրս ընդունված ուսանողների թվաքանակների տարբերությամբ, նաև դասախոսական կազմի կայունությամբ: Պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ ԵՊՀ ԻՄ-ի ուսանողները և դասախոսները հնարավորություն ունեն ու հաճախ օգտվում են ԵՊՀ-ի՝ անհամեմատ հարուստ գրադարանային պաշարներից, տանը ունեն համակարգիչներ և ինտերնետային կապ, որը հնարավորություն է տալիս ինքնուրույն նույնպեսն օգտվել էլեկտրոնային նյութերից, նաև օգտվել դասախոսների կողմից տրամադրվող էլեկտրոնային նյութերից:







Յուցանիշ 4.7. Շահագործման ծախսերի տեսակարար կշիռը ԵՊՀ ԻՄ-ի ծախսերի հանրագումարում

Յուցանիշ 4.7	2012	2013	2014	2015	2016
Շահագործման ծախսերի ծավալը (հզ. դր.)	113000	118820	126625	125500	130600
Ընդհանուր ծախսերի ծավալը (հզ. դր.)	334100	348782	372427	417723	435513
Շահագործման ծախսերի տեսակարար կշիռը (%)	**33.82**	**34.07**	**34.00**	**30.04**	**29.99**

Շահագործման ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում համեմատաբար կայուն է և տատանվում է 30-34%-ի սահմաններում:





Յուցանիշ 4.8. Մեկ ուսանողին ընկնող տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը

Յուցանիշ 4.8	2012	2013	2014	2015	2016
Տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը (հզ. դր.)	5504	6474	8609	4699	4750
ԵՊՀ ԻՄ ուսանողների թիվը	1577	1548	1531	1693	1685
Մեկ ուսանողին ընկնող տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը (հզ. դր.)	3.49	4.18	5.62	2.78	2.82

2012-14 տարիներին աճել են տարեկան ձեռքբերված սարքավորումների ծախսերը, ինչը պայմանավորված է մասնաճյուղն անհրաժեշտ սարքավորումներով համալրելու հանգամանքով: Այսինքն, վերոնշյալ ծախսերը կտրուկ ավելացել են՝ պայմանավորված համակարգչային և այլ լաբորատորիաների ստեղծմամբ, արդիականացմամբ և վերազինմամբ: Նշված փոփոխություններն էլ հիմք են դարձել մեկ ուսանողին ընկնող տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքի աճի համար (3,5-5,6 հզ. դր.): 2015-16թթ.-ների համար այդ ծախսերը նվազել են սարքավորումներով մասնաճյուղի հագեցվածության և նորերը ձեռք բերելու սահմանափակ անհրաժեշտության պատճառով:





Յուցանիշ 4.9. Տարեկան էներգածախսը, մեկ մարդուն ընկնող տարեկան էներգածախսը

Յուցանիշ 4.9	2012	2013	2014	2015	2016
Էներգիայի տարեկան ծախսը (հզ. դր.)	4448	4505	5563	4945	4980
Ուսանողների և աշխատակիցների միջին տարեկան թիվը	1885	1751	1740	1726	1783
Տեսակարար էներգածախսը (հզ. դր.)	**2.4**	**2.6**	**3.2**	**2.9**	**2.8**

Վերջին երեք տարիներին տարեկան էներգածախսը փոփոխական է՝ պայմանավորված հյուրանոցային համալիրում ջեռուցման տարբեր միջոցների կիրառմամբ, համակարգչային սրահների ավելացմամբ և վերազինմամբ:





Յուցանիշ 4.10. Տարեկան ջրածախսը, մեկ մարդուն ընկնող տարեկան ջրածախսը

Յուցանիշ 4.10	2012	2013	2014	2015	2016
Ջրամատակարարման և ջրահեռացման տարեկան ծախսը (հզ. դր.)	864	849	963	1164	1192
Ուսանողների և դասախոսների միջին տարեկան թիվը	1885	1751	1740	1726	1783
Ջրի տեսակարար ծախսը (հզ. դր./մարդ)	**0.46**	**0.48**	**0.55**	**0.67**	**0.67**

Վերջին 5 տարիների կտրվածքով տարեկան ջրածախսն ավելացել է, ինչը պայմանավորված է շուրջօրյա ջրամատակարարմամբ, մասնաճյուղի և հրավիրված դասախոսների համար նախատեսված հյուրանոցի կենցաղային պայմանների բարելավմամբ:





ԲՆԱԳԱՎԱՌ 5.

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Յուցանիշ 5.1.	Հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների թիվը, հաշվեկշիռը
Յուցանիշ 5.2.	Հիմնական դասախոս-ասպիրանտ քանակական հարաբերակցությունը
Յուցանիշ 5.3.	Գիտական հրատարակություններ-դասախոսներ հարաբերակցությունը
Յուցանիշ 5.4.	Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների թիվը, հաշվեկշիռը
Յուցանիշ 5.5.	Հետազոտական աշխատանքներում օգտագործվող համակարգիչների թիվը, հաշվեկշիռը, համակարգիչների թիվ/մասնակից հարաբերակցությունը
Յուցանիշ 5.6.	Գիտության համակարգի համար նախատեսված ինտերնետային կապի կետերի թիվը, հաշվեկշիռը

Ցուցանիշ 5.1. Հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների թիվը, հաշվեկշիռը

Ցուցանիշ 5.1	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների թիվը	2	10	3	2	**1**
Հիմնական դասախոսական կազմը	97	97	94	97	**70**
Հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների հաշվեկշիռը (%)	**2.1**	**10.3**	**3.2**	**2.1**	**1.4**

Հետազոտական նախագծերում ընդգրկված հիմնական դասախոսների մասնաբաժինը փոքր է: Մասնաճյուղը մշակում է միջոցառումներ նշված ցուցանիշի բարելավման համար: Ինչպես նշվել 2.13 ցուցանիշում, 2016-17 ուստարվա համար ներկայացված է միայն մասնաճյուղի հիմնական դասախոսական կազմի թիվը առանց ԵՊՀ-ից հրավիրված դասախոսների, համապատասխանաբար հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների թիվը նույնպես ներկայացնում է միայն մասնաճյուղի հիմնական դասախոսական կազմի մասնակցությունը:



Յուցանիշ 5.2. Հիմնական դասախոս-ասպիրանտ(հայցորդ) քանակական հարաբերակցությունը

Յուցանիշ 5.2	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Հիմնական դասախոսական կազմ	97	97	94	97	**70**
Ասպիրանտներ /հայցորդներ/	8	18	14	15	7
Հիմնական դասախոս/ասպիրանտ քանակական հարաբերակցությունը	12.1	5.4	6.7	6.5	10.0

2012-16թթ. ընթացքում հիմնական դասախոս և ասպիրանտ (հայցորդ) հարաբերակցության ցուցանիշը նվազում է: Այն հիմնականում պայմանավորված է ասպիրանտների (հայցորդների) թվի ավելացմամբ: 2016-17 ուստարում ասպիրանտների (հայցորդների) քանակը նվազել է, այն պայմանավորված է տեղացի կադրերով հիմնական դասախոսական կազմը համալրված լինելու փաստով:





Ցուցանիշ 5.3. Գիտական հրատարակություններ-դասախոսներ հարաբերակցությունը

Ցուցանիշ 5.3	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Հիմնական դասախոսական կազմը	97	97	94	97	70
Գիտական հրատարակությունների թիվը /մենագրություններ, հոդվածներ, զեկուցումների թեզիսներ/	101	96	107	120	69
Գիտական հրատարակություններ/ դասախոսներ հարաբերակցությունը	1.04	0.99	1.14	1.24	0.99

Գիտական հրատարակություններ-դասախոսներ հարաբերակցության ցուցանիշը համեմատաբար կայուն է՝ 1-1,24, այսինքն մասնաճյուղի հիմնական դասախոսական կազմը կայուն զբաղված է գիտական գործունեությամբ: 2016-17 ուստարվա 0.99 ցուցանիշը պայմանավորված է ներկայացվող գիտական հրատարակությունների թվի վրա դրված նոր պահանջներով (նախկինում հիմնական դասախոսական կազմի մեջ ներառված են նաև ԵՊՀ-ից հրավիրված դասախոսներ), իսկ 2016-17 ուստարուց՝ միայն հիմնական (70), առանց ԵՊՀ-ից հրավիրված դասախոսների: Այդ ցուցանիշով 2016-17 ուստարում ԵՊՀ ԻՄ-ի յուրաքանչյուր հիմնական դասավանդողին ընկնում է 1 գիտական հրատարակություն: ԵՊՀ ԻՄ-ում մշտապես իրականացվում են համալիր աշխատանքներ նշված ցուցանիշի բարելավման համար:





Յուցանիշ 5.4. Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների թիվը, հաշվեկշիռը

Յուցանիշ 5.4	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Ընդհանուր հրատարակությունների թիվը	109	104	122	136	69
Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների թիվը	23	21	22	1	1
Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների հաշվեկշիռը (%)	21.1	20.2	18.0	0.7	1.4

Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների մասնաբաժինը 2015-16 ուստարվանից սկսած կտրուկ նվազել է այդ ցուցանիշի վրա դրված պահանջների փոփոխման արդյունքում: Այստեղ ներառված են միայն մասնաճյուղի հիմնական դասախոսների հրատարակությունները:





Յուցանիշ 5.5. Հետազոտական աշխատանքներում օգտագործվող համակարգիչների թիվը և հաշվեկշիռը, համակարգիչների թիվ-մասնակից հարաբերակցությունը

Յուցանիշ 5.5	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Հետազոտական աշխատանքներում օգտագործվող համակարգիչների թիվը	9	9	10	2	0
Համակարգիչների ընդհանուր թիվը	113	140	144	150	168
Հետազոտական աշխատանքներում օգտագործվող համակարգիչների հաշվեկշիռը (%)	**8.0**	**6.4**	**6.9**	**1.3**	**0.0**
Հետազոտական նախագծերում ընդգրկված մասնակիցների թիվը	10	10	12	2	1
Համակարգիչների թիվ/մասնակից հարաբերակցությունը	**0.90**	**0.90**	**0.83**	**1.00**	**0.00**

Վերջին տարում հետազոտական աշխատանքներում օգտագործվող համակարգիչների հաշվեկշիռը նվազել է, նունիսկ 2016-17 ուստարվա համար այն 0% է, որը պայմանավորված է ինչպես հետազոտական աշխատանքներում օգտագործվող համակարգիչների թվի նվազմամբ, այնպես էլ համակարգիչների ընդհանուր թվի ավելացմամբ, և անուղղակի ձևով կապված է նաև մասնաճյուղում հետազոտական ծրագրերի բացակայությամբ:





Յուցանիշ 5.6. Գիտության համակարգի համար նախատեսված ինտերնետային կապի կետերի թիվը, հաշվեկշիռը

Յուցանիշ 5.6	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Գիտության համակարգի համար նախատեսված ինտերնետային կապի կետերի թիվը	5	9	5	0	0
Ինտերնետային կապի կետերի ընդհանուր թիվը	86	110	141	150	163
Հաշվեկշիռը (%)	5.8	8.2	3.5	0.0	0.0

Գիտության համակարգի համար նախատեսված ինտերնետ կապի կետերի հաշվեկշիռը 2014/15 ուստարուց հետո նվազել է՝ պայմանավորված գիտության համակարգի համար նախատեսված ինտերնետային կապի կետերի թվի նվազմամբ (նույնիսկ բացակայությամբ) և ինտերնետային կապի կետերի ընդհանուր թվի ավելացմամբ:





ԲՆԱԳԱՎԱՌ 6.	ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Յուցանիշ 6.1.	Դասախոսների ներգրավվածությունը միջազգային նախագծերում
Յուցանիշ 6.2.	Համալսարանական պարբերականների թիվը, պարբերականությունը
Յուցանիշ 6.3.	Հանրությանը տրամադրվող տեղեկատվական հրատարակությունների թիվը

Յուցանիշ 6.1. Դասախոսների ներգրավվածությունը միջազգային նախագծերում

Յուցանիշ 6.1	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Միջազգային նախագծերում ներգրավված դասախոսների թիվը	4	4	3	0	0
Հիմնական դասախոսական կազմը	97	97	94	97	70
Միջազգային նախագծերում ներգրավված դասախոսների հաշվեկշիռը (%)	4.1	4.1	3.2	0.0	0.0

Միջազգային նախագծերում ներգրավված դասախոսների մասնաբաժինը փոքր է: Այս իրողությունը բացատրվում է նրանով, որ ԵՊՀ ԻՄ-ում միջազգային համագործակցությունը համակարգվում է 2015թ.-ից, որի համար բացվել է Միջազգային կապերի բաժին:





Յուցանիշ 6.2. Համալսարանական պարբերականների թիվը, պարբերականությունը

Յուցանիշ 6.2	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Համալսարանական պարբերականներ	3	3	3	3	3

Համալսարանում պարբերաբար հրատարակվում են «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուն, «ԵՊՀ ԻՄ-ի գործունեության գնահատման առանցքային ցուցնիշներ»-ը և «ԵՊՀ ԻՄ-ի գործունեության տարեկան հաշվետվություն»-ը:



Յուցանիշ 6.3. Հանրությանը տրամադրվող տեղեկատվական հրատարակությունների թիվը

Յուցանիշ 6.3	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Հանրությանը տրամադրվող տեղեկատվական հրատարակությունների թիվը	3	3	7	7	7
Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք	5	5	5	5	5
Բակալավրի կրթական ծրագրեր			14	14	17

Հանրությանը տրամադրվող տեղեկատվական հրատարակությունների թիվը 2014/15 ուստարուց ավելացել է՝ պայմանավորված հայերեն և օտարալեզու գովազդային բուկլետների հրատարակմամբ: ԵՊՀ ԻՄ-ում կազմվում և պաշտոնական կայքում տեղադրվում են առկա (4 ֆակուլտետներ) և հեռակա ուսուցման համակարգի ուսանողների համար «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագրքեր»-ը, որոնք հասանելի են բոլոր ուսանողներին: